

շուրջ 70 համալսարաններ և ինստիտուտներ, երկու տասնյակ թատրոններ ու մոտ 60 թանգարան, համերգասրահներ, մարզական կենտրոններ, 21 եկեղեցի: Մայրաքաղաքում են գտնվում օտարերկրյա պետությունների 25 դեսպանատներ և 21 հյուպատոսություններ, արտերկրյա ֆինանսական, հասարակական և մշակութային հաստատությունների հայաստանյան գրասենյակներ, Հայաստանում գործող բանկերը, ֆինանսական հաստատությունները:

Այսօր Երեւանում ստեղծված է Սփյուռքի ներուժի ներգրավման, զբոսաշրջության խթանման, ներդրումային և գործարար բարենպաստ միջավայր, իսկ Հայաստան տարեկան ժամանող շուրջ կես միլիոն զբոսաշրջիկների գերակշիռ մասի համար Երեւանը դարձել է հիմնական հանգրվան:

Հաշվի առնելով վերը նշված ցուցանիշները՝ պարզ է դառնում, որ Երեւանը ամենամեծ և տնտեսապես ամենահզոր համայնքն է Հայաստանի Հանրապետության տարածքում: Այս

համատեքստում կարելի է արձանագրել՝ «Երեւան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո [3], փաստացի, տասներկու համեմատաբար փոքր համայնքների միավորման արդյունքում ձեւավորված համայնքի մոդելը արդարացված է՝ կառավարման, ֆինանսական հոսքերի ծրագրավորման և սոցիալ-տնտեսական զարգացման շրջանակներում:

Օգտագործված գրականություն

1. ՀՀ ԱԿԾ, Հայաստանի Հանրապետությունը և մարզերը թվերով, փոճակագրական ժողովածու, 2010, էջ 212-219
2. Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2010, էջ 11-12
3. «Երեւան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, Երեւան 2009

2008թ. դեկտեմբերի 26-ին ընդունված՝ «Երեւան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը [1] ամբողջովին փոխեց Երեւանի կարգավիճակը. 12 առանձին համայնքներ կենտրոնացան մեկ՝ Երեւան համայնքի մեջ: Սա նոր մտտեցում էր ու թերեւս առաջին փորձը Հայաստանի նորակախի Հանրապետությունում համայնքների խոշորացման շրջանակներում, ինչը բարձրացնում է կառավարման արդյունավետության մակարդակը, միասնական բյուջեի պարագայում դյուրացնում ծրագրավորումը և քաղաքի տեսլականի պատկերացման հաստատումից հետո դրա համար կատարվող համապատասխան միջոցառումների իրականացումը: Իհարկե՝ Երեւանի ավագանին համարվում է Երեւանի տեղական ինքնակառավարման բարձրագույն մարմինը, որը վերահսկողություն է իրականացնում Երեւանի քաղաքապետի գործունեության նկատմամբ, ով, ի դեպ, են համարվում է նույն ավագանու անդամ, սակայն Երեւանի քաղաքապետի դերակատարումը կառավարման գործընթացում բացառիկ է: Նա համարվում է տեղական ինքնակառավարման մարմին, ներկայացնում է Երեւանը՝ որպես համայնք, ավագանին և քաղաքապետարանը՝ այլ անձանց ու մարմինների հետ հարաբերություններում. ղեկավարում է քաղաքապետարանի աշխատանքները և, ինչպես նշեցինք, համարվում է ավագանու անդամ:

Քաղաքապետի լիազորությունների ընդհանուր բնութագիրը տրվում է «Երեւան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 52-րդ հոդվածում, մասնավորապես.

● Քաղաքապետն իրականացնում է հետևյալ պարտադիր լիազորությունները.

✓ կազմակերպում է ավագանու և քաղաքապետարանի աշխատանքները,

✓ իր իրավասության սահմաններում ձեռնարկում է բնակիչների իրավունքներն ու ազատությունները ապահովելու միջոցներ,

✓ օրենքով սահմանված կարգով նշանակում և ազատում է քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարին, կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին,

✓ սահմանում է Երեւանի շենքերի և շինությունների համարակազմը,

✓ ավագանու և ներկայացնում է Երեւանի սեփականություն համարվող գույքը օգտագործման տրամադրելու և օտարելու

տարեկան ծրագիրը, դրան համապատասխան՝ տնօրինում է Երեւանի սեփականություն համարվող գույքը,

✓ պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է քաղաքային կազմակերպությունների ղեկավարներին,

✓ նշանակում և ազատում է վարչական շրջանի ղեկավարներին,

✓ սահմանում է վարչական շրջանի ղեկավարի նստավայրը, օրենքով կամ կառավարության սահմանած կարգով ինքնուրույն և սեփական պատասխանատվությամբ կազմակերպում ու ղեկավարում է պետության պատվիրակած լիազորությունների իրականացումը,

✓ ամենամյա հաշվետվություններ է ներկայացնում հանրությանը՝ ավագանու, իր գործունեության ու Երեւանի սոցիալ-տնտեսական ընդհանուր վիճակի մասին, այդ հաշվետվությունները տեղադրվում են Երեւանի համացանցային պաշտոնական կայքում,

✓ վերահսկողություն է իրականացնում վարչական շրջանի ղեկավարի գործունեության նկատմամբ և պատասխանատու է նրանց լիազորությունների պատշաճ իրականացման համար,

✓ իրականացնում է Երեւանի սեփականություն համարվող ենթակառուցվածքների կառավարումը և ապահովում դրանց շահագործումը,

✓ խորհրդակցական ձայնի իրավունքով կարող է մասնակցել կառավարության նիստերին,

✓ ավագանու և ներկայացնում առաջարկ՝ վարչական շրջանի ղեկավարին կից հասարակական կարգով գործող խորհրդակցական խորհուրդների քանակի, անվանումների, ձեւավորման և գործունեության կարգի ու լիազորությունների վերաբերյալ,

✓ բացառապես սույն օրենքով սահմանված պարտադիր այլ իրավասություններ:

● Քաղաքապետն իրականացնում է հետևյալ պատվիրակված լիազորությունները.

✓ օրենքով սահմանված կարգով լուծում է Երեւանի տարածքում հավաքներ անցկացնելու հարցը,

✓ օրենքով Երեւանի քաղաքապետի համար պատվիրակված այլ լիազորություններ:

● Երեւանում տեղական ինքնակառավարումն արդյունա-

ԵՐԵՎԱՆԻ ԲԱՂԱԲԱՊԵՏԻ՝

ՀՏԴ 351/354 : 338 (479.25)

ՈՐՊԵՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈՒՈՐՏՈՒՄ

Միքայել
ՍԱՀԱԿՅԱՆ

վետ իրականացնելու նպատակով քաղաքապետի որոշ լիազորություններ օրենքով տրվում են վարչական շրջանի ղեկավարին:

● Քաղաքապետի առաջարկով եւ ավագանու որոշմամբ՝ վարչական շրջանի ղեկավարին կարող են պատվիրակվել նաեւ քաղաքապետի այլ լիազորություններ, բացառությամբ ավագանու հետ հարաբերություններում ունեցած լիազորությունների:

Բացի վերոգրյալից, Երեւանի քաղաքապետը, ըստ նույն օրենքի 53-րդ հոդվածի՝ հարաբերությունների մեջ է մտնում Երեւանի ավագանու հետ, մասնավորապես.

● Ավագանու հետ հարաբերություններում քաղաքապետն իրականացնում է հետեւյալ պարտադիր լիազորությունները՝ ավագանուն է ներկայացնում.

✓ առաջարկներ՝ Երեւանի ենթակայության կազմակերպությունների ստեղծման, վերակազմակերպման կամ լուծարման մասին,

✓ Երեւանի ենթակայության կազմակերպությունների աշխատակիցների թիվը, հաստիքացուցակը եւ պաշտոնային դրույքաչափերի մասին որոշման նախագիծը,

✓ Երեւանի զարգացման միամյա, քառամյա, երկարաժամկետ եւ հատուկ ծրագրերը,

✓ քաղաքապետարանի աշխատակազմի եւ Երեւանի ենթակայության կազմակերպությունների կառուցվածքների, աշխատակիցների թվի, հաստիքացուցակի եւ պաշտոնային դրույքաչափերի վերաբերյալ որոշման նախագծերը եւ դրանցում առաջարկվող փոփոխությունները,

✓ Երեւանի բյուջեի նախագիծը եւ դրանում առաջարկվող փոփոխությունները,

✓ առեւտրային այն կազմակերպությունների խորհուրդների եւ վերստուգիչ մարմինների կազմերի վերաբերյալ որոշման նախագծերը, որոնց կանոնադրական կապիտալում Երեւանն ունի մասնակցություն,

✓ տեղական հարկերի եւ տուրքերի (օրենքով սահմանված սահմաններում), ինչպես նաեւ քաղաքապետարանի մատուցած ծառայությունների դիմաց գանձվող վճարների տեսակների ու դրույքաչափերի մասին որոշման նախագծերը,

✓ Երեւանի փողոցների, պողոտաների, հրապարակների, զբոսայգիների, Երեւանի ենթակայության կրթական, մշակութային եւ այլ կազմակերպությունների անվանման ու վերանվանման որոշման նախագծերը օրենքով սահմանված կարգով ներկայացնում է գրանցման (բացառությամբ պատմամշակութային ու բնության հուշարձանների),

✓ Երեւան քաղաքի գլխավոր հատակագծի նախագիծը,

✓ Երեւան քաղաքի գլխավոր հատակագծին համապատասխան մշակված Երեւանի առանձին տարածքների գոտիավորման նախագծերը:

● Սույն հոդվածի 1-ին մասի 1-8-րդ կետերում նշված հարցերի վերաբերյալ որոշումների ընդունման նախաձեռնությամբ կարող են հանդես գալ նաեւ ավագանու անդամները:

Եթե հաշվի առնենք նաեւ քաղաքապետի լիազորությունները ֆինանսների բնագավառում, կարող ենք նշել, որ նա կառավարման հարցում ունի կարելի դերակատարումներից մեկը: Այդ լիազորությունները, ըստ «Երեւան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի, հետեւյալն են.

● Քաղաքապետը ֆինանսների բնագավառում իրականացնում է հետեւյալ պարտադիր լիազորությունները.

✓ կազմում է Երեւանի բյուջեի նախագիծը եւ սահմանված կարգով ներկայացնում ավագանու,

✓ տնօրինում է Երեւանի բյուջեի միջոցները, ապահովում դրանց նպատակային օգտագործումը,

✓ հսկում է գլխավոր ֆինանսների եւ քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի ֆինանսական գործունեությունը,

✓ օրենքով սահմանված կարգով կազմակերպում է գույքահարկի եւ հողի հարկի գանձումը, ինչպես նաեւ կազմակերպում է տեղական հարկերի եւ տուրքերի եւ իրենց մատուցած ծառայությունների դիմաց վճարների, Երեւանի սեփականություն համարվող գույքի վարձակալությունից եւ օտարումից մուտքերի գանձումն ու վերահսկումը,

✓ Երեւանի բյուջեի հարկերը եւ օրենքով սահմանված այլ

մուտքերը չվճարող անձանց (բացառությամբ եկամտահարկ եւ շահութահարկ չվճարողների) նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ,

✓ ավագանու առջեւ հանդես է գալիս բյուջեի կատարման վերաբերյալ տարեկան հաշվետվությամբ,

✓ ապահովում է օրենսդրության շրջանակներում քաղաքապետարանում ներքին անուղիտի համակարգի ամկայությունը:

Վերոշարադրյալից պարզ է դառնում, որ «Երեւան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո Երեւանի քաղաքապետի ինստիտուտը նոր գաղափար ու համայնքների արդյունավետ կառավարման ասպարեզում նոր ավանդույթներ է ստեղծում: Մասնավորապես լինելով համայնքի յուրաքանչյուր բնակչի համակեցության կանոնների համար պայմաններ ստեղծող անձ, անհատ, նա իր լիազորությունների օգտագործմամբ կարող է կիրառել այնպիսի գործիքներ, որոնք թույլ կտան Երեւան համայնքի համաչափ զարգացման ապահովումը բոլոր բնագավառներում [2], ինչը մինչեւ այդ օրենքի անկայությունը առավել քան դժվար էր, քանի որ յուրաքանչյուր ներկա վարչական շրջան, այդ ժամանակ թաղ՝ համայնք, կազմում էր իր բյուջեն՝ իր թաղի սահմաններում անկախ խնդիրների լուծման համար: Սակայն նման ձեւավորված բյուջեն մասնավորապես փոքր թաղերում՝ Նուբարաշեն, Նորք-Մարաշ, առավել քան քիչ էր՝ նույնիսկ ընթացիկ աշխատանքների համար, ավելորդ է խոսել զարգացում ապահովելու առումով: Իսկ մի շարք այլ թաղերում էլ, որտեղ բիզնես միջավայր գրեթե ձեւավորված չէ, դարձյալ միայն թաղի բնակիչներից գանձած գումարները բավարար չէին ապահովելու զարգացման բարձր տեմպեր: Թերեւս Կենտրոն, Արաբկիր, ապա ինչ-որ չափով նաեւ Ավան, Դավիթաշեն եւ Մալաթիա-Սեբաստիա թաղերն էին, որ կարողանում էին բիզնես միջավայրի ամկայության պայմաններում կայուն զարգացման որոշակի հիմքեր դնել: Իսկ այսօր Երեւանը դիտվում է որպես մեկ ընտանիք, որտեղ մի վարչական շրջան օգնում է մյուսին, եւ զարգացման տեսլականը կառուցվել է հենց այդ գաղափարի՝ Երեւան համայնքի հենքի վրա:

Ավելին՝ Երեւանի քաղաքապետն ունի նաեւ «Երեւան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 65-րդ հոդվածով նախատեսված՝ գործադիր իշխանության հանրապետական մարմինների եւ դրանց Երեւանի տարածքային ծառայությունների հետ հարաբերվելու իրավունքներ, մասնավորապես.

● Քաղաքապետը գործադիր իշխանության հանրապետական մարմինների եւ դրանց Երեւանի տարածքային ծառայությունների հետ հարաբերություններում.

✓ առաջարկներ է ներկայացնում վերջիններիս իրավասությանը վերաբերող՝ Երեւանին առնչվող հարցերի վերաբերյալ,

✓ գործադիր իշխանության Երեւանի տարածքում մարմինների ղեկավարների մասնակցությամբ կազմակերպում է խորհրդակցություններ, մասնակիցների ուշադրությունը հրավիրում Երեւանին առնչվող խնդիրների վրա,

✓ Երեւանի տարածքում ապօրինի շինարարության, ընդերքի օգտագործման, ինչպես նաեւ հողազավթումների, ապօրինի ծառահատման, որսագողության եւ ապօրինի ձկնորսության դեպքերի կանխման ու արգելման հետ կապված՝ կարող է դիմել ոստիկանություն՝ համապատասխան աջակցություն ստանալու համար,

✓ քաղաքապետը ոստիկանությանը տեղեկացնում է Երեւանում կազմակերպվող միջոցառումների (ներառյալ՝ ժողովների, հանրահավաքների, երթերի, ցույցերի եւ գանգալածային այլ միջոցառումների) վերաբերյալ, որի պարագայում ոստիկանությունը ձեռնարկում է անհրաժեշտ միջոցներ՝ այդ միջոցառումների ընթացքում հասարակական կարգը պահպանելու, ինչպես նաեւ Երեւանի բնականոն գործունեությունն ապահովելու նպատակով,

✓ քաղաքապետն իրավունք ունի հանրապետական գործադիր մարմին ներկայացնել գրավոր, փաստարկված առաջարկ՝ վերջինիս տարածքային ծառայության գործունեության վերաբերյալ:

Երեւանի քաղաքապետը ունի նաեւ նույն օրենքի 69-րդ հոդվածով նախատեսված կամավոր լիազորություններ՝ ուղղված տեղական բարօրության ապահովմանը, մասնավորապես.

✓ համագործակցությունը բնապահպանական խնդիրներ իրականացնող հասարակական կազմակերպությունների հետ,

✓ աջակցությունը Երեւանի տարածքում գործող մշակութային կազմակերպություններին,

✓ համագործակցությունը Երեւանի տարածքում գործող պետական գրանցում ունեցող կրոնական կազմակերպությունների հետ,

✓ տոների եւ հիշատակի օրերի հետ կապված՝ զանգվածային միջոցառումների կազմակերպումը, ավանդական ազգային ծեսերի վերականգնման ու տարածմանը նպաստելը,

✓ լիազոր մարմնի հետ համաձայնեցնելով՝ քաղաքային առողջապահական ծրագրերի իրականացումը,

✓ աջակցությունը Երեւանում գործող առողջապահական, ֆիզիկական կուլտուրայի, մարզական կազմակերպություններին,

✓ բնակչության սակիտարահիգիենիկ կրթության, առողջ ապրելակերպի քարոզչությունը,

✓ սոցիալական ծրագրերի իրականացումը, աջակցությունը սոցիալական պաշտպանության խնդիրներ իրականացնող հասարակական կազմակերպությունների գործունեությանը:

Այսպիսով՝ «Երեւան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը Երեւանի քաղաքապետին ընձեռնել է մեծ հնարավորություններ եւ օժտել տարաբնույթ գործիքներով՝ համայնքի զարգացմանն ուղղված միջոցառումներով քաղաքի դինամիկ զարգացման ապահովման համար (ինչը դարձյալ նույն օրենքով վերահսկվում է ավագանու կողմից, որն էլ լինելով նույն համայնքի ընտրովի մարմին՝ քաղաքապետարանի գործողությունները համայնքի բնակիչների համար դարձնում է առավել թափանցիկ եւ վերահսկելի, ինչն իր հերթին նպաստում է կառավարման որակի բարձրացմանը), ինչպես նաեւ քաղաքացիական հասարակության ձեւավորման համար՝ օրենքի սահմաններում ձեռնարկելով անհրաժեշտ բոլոր միջոցառումները՝ պետական մարմիններին օրինակալուծության դաշտում առավել քան մոտ պահելու համար [3]:

Հայաստանում 2009թ. մարտի 3-ին դիտարկվեց փոխարժեքի կտրուկ արժեզրկում, ինչն ամբողջությամբ համընկնում է արժութային ճգնաժամ բնորոշմանը՝ բոլոր դրսևորումներով: Արժութային ճգնաժամերին ՀՀ հակվածությունը գնահատելու համար կառուցվեց մոդել՝ կիրառելով գրականության մեջ տարածված Ազդանշանային մոտեցումը:

Ազդանշանային մոտեցումը ոչ պարամետրական վերլուծության մեթոդ է, որի առանձնահատկությունն այն է, որ ի տարբերություն պարամետրական վերլուծության մեթոդների՝ այն հաշվի է առնում տարբեր գործոնների սխալ ազդանշան տալու հնարավորությունը եւ գնահատում ճգնաժամեր կանխատեսելու դրանց ունակությունը:

Ազդանշանային մոտեցման մոդելը կառուցվում է միայն Հայաստանի տվյալների հիման վրա, որը ներառում է 1996-2010թթ. ժամանակահատվածը: Չնայած այս մոդելում կիրառվում են ամսական տվյալներ, սակայն հաշվի առնելով դիտարկվող ժամանակային շարքերի կարծուծության, ինչպես նաեւ վերոնշյալ պատկերային մոդելի հետ համադրելիության հարցը՝ ազդանշանային պատուհանը սահմանվել է 12 ամիս:

Ազդանշանային տվյալ հորիզոնի շրջանակներում եթե ցուցանիշի արժեքն անցնում է որոշակի սահմանային մակարդակը, ապա համարվում է, որ այն ազդանշան է ուղարկել հաջորդող 24 ամիսների (ազդանշանային հորիզոնի) ընթացքում ճգնաժամի հանդես գալու վերաբերյալ, իսկ տվյալ սահմանային արժեքը վերջինի ազդանշանային շեմն է: Եթե ազդանշանից հետո ճգնաժամային պատուհանի շրջանակներում տեղի է ունենում ճգնաժամ, այդպիսի ազդանշանը համարվում է լավ, հակառակ դեպքում՝ կեղծ ազդանշան կամ աղմուկ: Յուրաքանչյուր ցուցանիշի շեմային մակարդակն ընտրվում է այնպես, որ հավասարակշռություն հաստատվի շատ կեղծ ազդանշաններ ունենալու եւ շատ ճգնաժամեր բաց թողնելու ռիսկերի միջեւ (առաջին եւ երկրորդ կարգի սխալներ): Սա իրականացվում է՝ նվազագույնի ձգտեցնելով աղմուկ-ազդանշան հարաբերակցությունը, որի հաշվարկման համար կիրառվում է հետևյալ մատրիցը.

	ճգնաժամ	հաղաղ շրջան
Ուղարկվել է ազդանշան	A	B
Չի ուղարկվել ազդանշան	C	D

Մատրիցում A-ն այն ամիսների քանակն է, որոնց համար ցուցանիշը ուղարկել է լավ ազդանշաններ, B-ն այն ամիսների քանակն է, որոնց համար ցուցանիշը ուղարկել է կեղծ ազդանշաններ, C-ն այն ամիսների քանակն է, որոնց համար ցուցանիշը չի ուղարկել որեւէ ազդանշան, որը կլինել լավը, D-ն այն ամիսների քանակն է, որոնց համար ցուցանիշը չի ուղարկել ազդանշան, ինչը կլինել կեղծ: Ակնհայտ է, որ ցուցանիշի կանխատեսումային ունակությունը կլինի կատարյալ, եթե B=0 եւ C=0:

Ազդանշանային մոտեցման համար խիստ կարեւոր աղմուկ-ազդանշան ցուցանիշը հաշվարկվում է՝ հնարավոր կեղծ ազդանշանների մեջ արձանագրված կեղծերի տեսակարար կշիռը հարաբերելով հնարավոր լավ ազդանշանների մեջ փաստացի լավերի տեսակարար կշիռն կամ վերջին դիտարկված մատրիցի հիման վրա.

$$NSR = \frac{B/D}{A/C} :$$

Այս գործակիցը հնարավորություն է տալիս ոչ միայն գտնել ցուցանիշների շեմային արժեքները, այլեւ գնահատել յուրաքանչյուր գործոնի կանխատեսային ունակությունը:

Նշված մեթոդաբանությամբ կառուցված Համակցված ինդեքսի շարժը ցույց է տալիս, որ այն առավել չափով ազ-

Օգտագործված գրականություն

1. «Երեւան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք. Երեւան 2009, էջ 32-50
2. Մենելմենտ, Սովարյան Յու.Մ., Տեսնեսագետ, 2002, էջ 248-269
3. Теория государства и права, Под ред. Марченко М.Н., Москва: Зерцало, 2001, с. 409.